



ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

2017
ՏԱՐԵՎԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Սիրելի համաքաղաքացիներ,

Երևանի քաղաքապետարանն ամփոփում է աշխատանքային տարին արդեն ավանդական դարձած տարեկան հաշվետվությունների թողարկմամբ: Լիաիույս եմ, որ դուք կթերթեք հաշվետվության էջերը և կծանոթանաք անցած տարվա ընթացքում Ձեր վարչական շրջանում կատարված աշխատանքներին: Ուրախությամբ

եմ արձանագրում, որ Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում մեծածավալ աշխատանքներ են իրականացվել, և տարեվերջին կարող ենք վստահ ասել, որ ձեռքբերումների շարքը ոգևորիչ է: Պետք է նշեմ, որ այդ գործում իրենց զգալի լուծման հավասարապես ներդրել են ինչպես մեր բնակիչները, այնպես էլ վարչական շրջանների ղեկավարները:

Վստահ եմ, որ առկա որակական փոփոխությունները՝ բարեկարգված բակային տարածքները, կառուցված խաղահրապարակները, ավելացած կանաչապատ տարածքները, բարեկարգ ու լուսավոր մայթերն ու փողոցները իրենց անմիջական ազդեցությունն են ունենալու Երևանի յուրաքանչյուր բնակչի կյանքի որակի և ընդհանուր քաղաքային միջավայրի դրական փոփոխության տեսանկյունից:

Վստահ եմ նաև, որ այն տեսանելի արդյունքը, որ արձանագրել ենք հարմարավետ քաղաքային միջավայր ստանալու գործում, լինելու է յուրաքանչյուրիս հոգատար վերաբերմունքի ու հոգածության առարկան, ինչն էլ թույլ է տալու իրականացնել նոր ծրագրեր՝ մեր մայրաքաղաքի և նրա վարչական շրջանների զարգացումը դեպի երկարաժամկետ հեռանկար ուղղորդելու նպատակով:

Տարոն Մարգարյան
Երևանի քաղաքապետ



Հարգելի նուբարաշենցիներ,

Հպարտությամբ ուզում եմ արձանագրել, որ 2017 թվականը հաջողությունների ու ձեռքբերումների տարի էր մեր վարչական շրջանի համար: Աշխատակազմի և բնակիչների համատեղ ջանքերի, ուշադրության և պատասխանատվության զգացումի բարձր աստիճանի շնորհիվ տարեցտարի մենք ավելի բարեկարգ ու ավելի ջերմ միջավայր ենք ստեղծում Նուբարաշենում: Կարևոր եմ համարում նշել, որ ստեղծված նորի ու գեղեցիկի պահպանման հարցում կարևոր է մեր բնակիչների ներդրումը, հոգատարությունն ու սրտացավությունը: Հետզհետե գերիշխող է դառնում այն բանի գիտակցումը, որ բարեկարգ հատվածների ավելացումը ոչ միայն վարչական շրջանի ներկայանալի արտաքին տեսքն է ապահովում, այլև բնակիչներին ստիպում է ավելի հոգատար լինել և բարեխիղճ կերպով վարվել ընդհանուր օգտագործման հանրային տարածքների հանդեպ:

Վստահ եմ, որ միմյանց աջակցելով՝ մենք կպահպանենք ունեցածն ու կշարունակենք ստեղծել նորը:

Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավար
Արթուր Կիրակոսյան

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2017 թվականի ընթացքում վարչական շրջանում իրականացվել են փողոցների և բակային տարածքների մասնակի ասֆալտապատման աշխատանքներ:



- ✓ Փողոցներ և բակային տարածքներ՝ **շուրջ 16000 քմ,**
- ✓ Նոր եզրաքարեր տեղադրվել են 11 փ. 5-րդ, 11-րդ շենքերի բակային տարածքներում՝ **630 գծմ,**
- ✓ Եզրաքարեր են փոխարինվել 6-րդ, 11-րդ փողոցներում՝ **42 գծմ,**
- ✓ Վարչական շրջանի 11-րդ փողոցում, 11փ. 5-րդ և 11-րդ շենքերի բարեկարգված բակային տարածքներում կառուցվել է **10** թեքահարթակ:
- ✓ 2017 թվականի ընթացքում վարչական շրջանի «Դ» թաղամասում իրականացվել են 250 գծմ կոյուղագծի կառուցման աշխատանքներ՝ «Վեոլիա ջուր» ընկերության հետ համագործակցությամբ:



ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Բնակարանային ֆոնդի պահպանման ուղղությամբ 2017 թ. կատարվել են նորոգման և բնակֆոնդի բարելավմանն ուղղված այլ աշխատանքներ:

ՇՔԱՄՈՒՏՔԵՐԻ ՎԵՐԱՆՈՐԳՈՒՄ

- ✓ վերանորոգվել է **7** բազմաբնակարան շենքի **16** շքամուտք:

ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐԳՈՒՄ

- ✓ **1** բազմաբնակարան շենքում հիմնանորոգվել է **1059 քմ** թեք տանիք,
- ✓ իրականացվել են **24** բազմաբնակարան շենքերի **3069 քմ** ընդհանուր մակերեսով թեք տանիքների մասնակի վերանորոգման աշխատանքներ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԳՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՏ

- ✓ 6-րդ փողոցի 1/2-րդ, 1/3 -րդ շենքերում վերանորոգվել է **2** վերելակ:

ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

2017 թ. Նուբարաշեն վարչական շրջանում իրականացվել են բակային տարածքների բարեկարգման, խաղահրապարակների կառուցման, մարզագույքով համալրելու և այլ տիպի աշխատանքներ:



- ✓ շահագործման է հանձնվել **2** բակային տարածք,
- ✓ տեղադրվել են **2** բակային համալիր, 2 մանկական խաղ և **2** մարզասարք,
- ✓ 11 փ. 5-րդ և 11-րդ շենքերի բակային տարածքներում իրականացվել են նկարագարդման աշխատանքներ
- ✓ իրականացվել է ընդհանուր օգտագործման գույքի, երկաթյա կոնստրուկցիաների ներկման և վերանորոգման աշխատանքներ վարչական շրջանի 34 բազմաբնակարան շենքերի բակային տարածքներում, 6-րդ, 9-րդ, 10-րդ փողոցների զբոսայգիներում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. բնակչության խոցելի հատվածի համար շարունակել են իրականացվել սոցիալական ծրագրեր:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԶՈՐԱՄԱՍԵՐ

- ✓ Կազմակերպվել է Նուբարաշեն վարչական շրջանից ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող երևանաբնակ ժամկետային զինծառայողների 60 ծնողների այցելությունը զորամասեր:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀՎ-ՆԵՐԻ ԵՎ ՄԻ-ԶԱԶԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՏ

- ✓ Բազմաբնույթ սոցիալական ծրագրեր են իրականացվել «Սատար» հաշմանդամների ՀՎ, «Գայանե» ՀՎ, «Լենա» ՀՎ, «Օգնենք կարիքավոր երեխաներին» ՀՎ, «Առդա» բարեգործական հիմնադրամի, անհատ բարերարների հետ: Համագործակցության արդյունքում տարաբնույթ աջակցություն է ցուցաբերվել 1500 շահառուի:
- ✓ «Էրեբունի-Երևան 2799» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում 70 ընտանիքի հատկացվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:
- ✓ Ամանորի առիթով սոցիալապես անապահով 140 անձի տրամադրվել են սննդի փաթեթներ և անապահով ընտանիքների 363 երեխաների՝ ամանորյա նվեր-փաթեթներ:



ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. կատարվել են նախադպրոցական հաստատությունների վերանորոգման, գույքային համալրման և այլ աշխատանքներ:

- ✓ Նուբարաշեն վարչական շրջանում գործող թիվ 125 մանկապարտեզի ջեռուցման համակարգի հզորացման նպատակով տեղադրվել են նոր հզոր ջեռուցման կաթսաներ:
- ✓ Փոխվել է մանկապարտեզի պատշգամբի տանիքը, իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ:
- ✓ Մանկապարտեզի ավարտական խմբերի սաներին տրամադրվել են դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ, մանկապարտեզի բոլոր խմբերին տրվել են մաթեմատիկական և գրաճանաչության դիդակտիկ պարագաներ:
- ✓ Պարբերաբար կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, ինչպես նաև տարաբնույթ թեմատիկ հանդեսներ, խաղեր և մրցույթներ:
- ✓ Ն. 175 միջնակարգ դպրոցում գործում է նախակրթարան, որտեղ հաճախում է 25 երեխա:

Ապահովվել է 165 երեխայի նախադպրոցական անվճար ուսուցում:



2017 թ. Նուբարաշեն վարչական շրջանում աշխույժ է եղել մշակութային կյանքը:

- ✓ Նուբարաշեն վարչական շրջանում գործող «Երևանի Նուբարաշեն մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ հաճախում է **330** երեխա:
- ✓ Կազմակերպվել են տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ:
- ✓ «Երևանյան ամառ» ծրագրով իրականացվել են մանկական ժամանցային և ուսուցողական ծրագրեր:
- ✓ Գործել են բակային ճամբարներ, կազմակերպվել է **60** երեխայի հանգիստը Հանքավանի «Լուսաբաց» մարզաառողջարանային ճամբարում:
- ✓ Վ. Մոկացյանի անվան երաժշտական դպրոցում կազմակերպվել է **197** երեխայի արտադպրոցական ուսուցում:



ՍՊՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թ. աշխույժ է եղել վարչական շրջանի սպորտային կյանքը, վարչական շրջանի մարզիկներն ու թիմերը մրցանակային առաջատար տեղեր են նվաճել տարբեր նշանակության մրցաշարերում:

- ✓ Վարչական շրջանում գործում է շախմատի մանկապատանեկան մարզադպրոց: Շախմատասեր փոքրիկների համար ապահովված են բոլոր պայմանները: Նորաստեղծ դպրոցն ունի անհրաժեշտ կահույքով և պարագաներով կահավորված դասասենյակներ: Դպրոց անվճար հաճախում է 130 երեխա:
- ✓ Վարչական շրջանի հավաքական թիմերն ակտիվ մասնակցել են շրջանային և քաղաքային փուլերի մրցումներին:
- ✓ ՀՀ Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային 26-րդ մարզական խաղերին:
- ✓ ՀՀ ազգային ժողովի գավաթի խաղարկության խաղերին:
- ✓ «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» 2017թ. համաքաղաքային բակային ավանդական փառատոնին:
- ✓ 2017 թվականին անցկացված՝ Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերին:
- ✓ ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին:
- ✓ Բնակչության առողջ ապրելակերպի զարգացման շրջանակում մարզաառողջարարական պարապմունքներ, սպորտլանդիաներ, մարզական տարբեր միջոցառումներ են կազմակերպվել վարչական շրջանի զբոսայգիներում, բակերում, վարչական շրջանում տեղադրված բազմաֆունկցիոնալ դաշտերում:



ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ

2017 թ. Նուբարաշեն վարչական շրջանում զգալի աշխատանք է կատարվել կանաչապատման ուղղությամբ:

- ✓ Բակային տարածքներում բարելավվել է **1900 քմ** ընդհանուր մակերեսով կանաչ գոտի:
- ✓ Ծաղկային տարածքը կազմել է 850 քմ:
- ✓ Տնկվել է շուրջ **36000** ծաղիկ:
- ✓ Գարնանային և աշնանային ծառատունկերին տնկվել է **3150** ծառ և **600** թուփ:
- ✓ Իրականացվել է **782** ծառի խնամքի և պահպանման աշխատանք:



ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ», «ՎԵՌԼԻԱ ԶՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ՆԵՐԻ ՀԵՏ

2017 թ. զգալի աշխատանք է կատարվել ջրագծերի, կոյուղագծերի, գազիֆիկացման և էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգի նորոգման ուղղությամբ:

- ✓ Վերանորոգվել են ջրագծի բազմաթիվ հանգույցներ, կարգավորիչներ և խողովակներ:
- ✓ Կարգաբերվել է 13 դիտահոր:
- ✓ Համատեղ «Վեռլիա ջուր» ՓԲ ընկերության հետ իրականացվել են 50 գծմ կոյուղագծի կառուցման աշխատանքներ:
- ✓ Նորերով է փոխարինվել թեքված և վթարային 2 հենասյուն:
- ✓ Փոխարինվել և կարգաբերվել են և կորոբների մեջ են անցկացվել 6-րդ փողոցի 1/1-րդ, 1/2-րդ, 1/3-րդ, 1/4-րդ, 144-րդ, 150-րդ շենքերի 11-րդ փողոցի 2-րդ, 3-րդ, 13-րդ բազմաբնակարան շենքերի ջրամուտքերի մալուխագծերը:
- ✓ Կառուցվել է նոր ՏԵ և հենասյուններով նոր էլեկտրամատակարարում 9-րդ փողոցի վերջնամասում:
- ✓ Նուբարաշենի 11 փողոցի 5-րդ և 11-րդ շենքերի բակային տարածքներում և Նուբարաշենի 9-րդ, 12-րդ փողոցներում անցկացվել է արտաքին լուսավորության ցանց:
- ✓ «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից բարելավման ներդրումային ծրագրով իրականացվել է 1480 գծմ հոսանքագծերի փոխարինում 14 հասցեներում:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

2017 թ. Նուբարաշեն վարչական շրջանն ակտիվ աշխատանք է իրականացրել միջազգային համագործակցությունն ամրապնդելու ուղղությամբ:

- ✓ Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը համագործակցում է Ֆրանսիայի Առևտվիլ քաղաքի քաղաքապետարանի, ՌԴ Չովաշիայի հանրապետության Չեբոկսարի քաղաքի քաղաքապետարանի, Արցախի Հանրապետության Հադրութ քաղաքի քաղաքապետարանի և Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի հետ:
- ✓ «Էրեբունի-Երևան 2799» տոնակատարության շրջանակում Չովաշիայի հանրապետության Չեբոկսարի և Առևտվիլ քաղաքներից ժամանած պաշտոնական պատվիրակության ներկայացուցիչները հյուրընկալվել են Նուբարաշեն վարչական շրջանում:





**Մենք
հաշվետու ենք**
մեր համաքաղաքացիներին

ԹԵԺ ԳԻԾ՝
+(374 11) 518-738
nubarashen@yerevan.am

